ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.11.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/92

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Ինտերքլին» ՍՊԸ-ի կողմից 29.10.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/92 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. **«Ինտերքլին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Ինտերքլին» ՍՊԸ-ն 29.10.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ Ազգային ժողովի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ), որին մասնակցել է նաև «Ինտերքլին» ՍՊԸ-ն:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 19.09.2018թ. թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը արձանագրել է, որ հաշվի առնելով այն

հանգամանքը, որ գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ կետի «բ» և «գ» ենթակետերով՝ որոշեց նիստը կասեցնել՝ Ընթացակարգի բոլոր մասնակիցներին առաջարկված գների նվազեցման նպատակով հրավիրել միաժամանակյա բանակցությունների՝ 04.10.2018թ. ժամը 12:00-ին:

Մրցույթի գնահատող հանձնաժողովը 19.09.2018թ. թիվ 3 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ արձանագրել է, որ «Ինտերքլին» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով միաժամանակյա բանակցությունների վարման նիստի տեղի և ժամի մասին չէր ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Ընկերության կողմից բողոքի իրավական հիմքեր նշվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերը, Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը:

Ընկերությունը նշել է, որ «ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովը 19.09.2018թ. թիվ 3 արձանագրության 5-րդ կետով արձանագրել է, որ «Ինտերքլին» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով միաժամանակյա բանակցությունների վարման նիստի տեղի և ժամի մասին չէր ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Ընկերությունը հայտնել է, որ «Ինտերքլին» ՍՊԸ-ն 02.10.2018թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից չի ստացել որևէ ծանուցում /նամակ/ 04.10.2018թ. տեղի ունենալիք բանակցությունների վերաբերյալ և միայն թիվ 3 արձանագրությունը gnumner.am կայքում հրապարակվելու օրվանից է տեղեկացել, որ իբր Ընկերությունը ծանուցված է եղել միաժամանակյա բանակցությունների վարման նիստի տեղի և ժամի մասին և չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Ընկերությունը հայտնել է, որ 16.10.2018թ. նշված խնդրի վերաբերյալ «Ինտերքլին» ՍՊԸ-ն հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն, որով խնդրել է հայտնել հետևյալը. «ՀՀ ԱԺ-ի կողմից վերջինիս կարիքների համար գրասենյակային մաքրման

ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգ: Հայտերի բացումից հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.10.2018թ Ընթացակարգի բոլոր մասնակիցներին առաջարկված գների նվազեցման նպատակով հրավիրել է միաժամանակյա բանակցությունների /որը մենք չենք ստացել/, որը տեղի էր ունենալու 04.10.2018թ. ժամը 12:00-ին, ք. Երևան, Մ Բաղրամյան պողոտա 19 հասցեում գտնվող ընդունարանում: Այնուհետև, Ընկերությունը անակնկալի է գալիս, երբ gnumner.am կայքում ծանոթանում է տեղի ունեցած բանակցությունների մասին: Ստացվում է մի իրավիճակ, որ Ընկերությունը չծանուցվելով վերոնշված բանակցությունների մասին զրկվել է նշված ընթացակարգին այլևս մասնակցելու իրավունքից, ավելին հնարավոր էր, որ գների նվազեցման արդյունքում Ընկերությունը կառաջարկեր ավելի շահավետ գին, որի արդյունքում կճանաչվեր առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ խնդրում եմ հայտնել, թե ինչով է պայմանավորված այն իրավիճակը, երբ «ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով «ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի քարտուղարի alina.grigoryan@parliament.am էլ. հասցեից armeps համակարգի միջոցով Ընկերությանը պատկանող info@cleanhouse.am էլ. հասցեին ինչու չի ստացվել ուղարկված ծանուցումը: Միևնույն ժամանակ խնդրում եմ հայտնել, արդյոք ստեղծված իրավիճակում առկա է Ընկերության մեղավորությունը:

22.10.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է պատասխան հետևյալ բովանդակությամբ. «Տեղեկացնում ենք, որ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/» ծածկագրով ընթացակարգի փորձաքննությունը ցույց տվեց, որ Պատվիրատուի կողմից «Ինտերքլին» ՍՊԸ-ին էլեկտրոնային գնումների armeps համակարգից էլեկտրոնային ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 24/09/2018թ. ժամը 18:42-ին և 05/10/2018թ. ժամը 19:08-ին ուղարկվել են էլեկտրոնային ուղերձներ: Կից ներկայացնում ենք վերոգրյալ ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ուղարկված էլեկտրոնային ուղերձ-նամակները: Միաժամանակ հայտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի,

գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները /անգործությունները/ և որոշումները: Բողոքարկման հետ կապված պայմանները սահմանված են օրենքի 6-րդ բաժնով»:

Ընկերությունը նշել է, որ տվյալ պարագայում հիմնավորվում է, որ Ընկերության էլեկտրոնային հասցեին Պատվիրատուի կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ բանակցությունների վերաբերյալ 02.10.2018թ.-ին որևէ ծանուցում չի ստացվել, հետևաբար Ընկերությունը զրկվել է Ընթացակարգին հետագա մասնակցության իրավունքից, այդ թվում նաև բանակցություններին մասնակցելու իրավունքից, արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3րդ հոդվածի պահանջները, ինչպես նաև Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները:

09.11.2018թ. ի լրումն բողոքի Ընկերությունը հայտնել է, որ ԳԲԽ-ԱՄ-208/92 ծածկագրով բողոքի քննության ընթացքում Ազգային ժողովի ներկայացուցիչները պնդեցին, որ առաջնորդվել են Ընկերության կողմից ներկայացված հավելված 1-ում նշված էլեկտրոնային փոստի հասցեով և արձանագրությունները և ծանուցումը ուղարկել են այդ էլեկտրոնային հասցեով: Այնուհետև հասկանալով, որ միգուցե Ընկերությունը սխալ է նշել էլ.փոստի հասցեն այսինքն՝ nfo ավելացրել են i նիշը և արձանագրույունները ուղարկել info...էլ փոստի հասցեով:

Ընկերությունը նշել է, որ այստեղից հետևություն կարելի է անել, որ եթե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ արձանագրությյունները ուղարկելուց առաջնորդվել է այն սկզբունքով, որ Ընկերությունը միգուցե սխալ է նշել էլ. փստի հասցեն և nfo..... էլ. փոստի հասցեին ավելացրել է i նիշը և արձանագրույունները ուղարկել info...էլ փոստի հասցեին, ապա ինչու այդ նույն սկզբունքով չի առաջնորդվել նաև բանակցության ծանուցումը ուղարկելուց: Քանի որ եթե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պատճառաբանում է, որ առաջնորդվել է Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ՝ ապա բոլոր նամակները, արձանագրությունները և ծանուցումները հարկավոր էր ուղարկել հավելված 1-ում նշված nfo....էլ հացեին և այս պարագայում չէր առաջանա մի քանի նամակը info...էլ.հացեին ուղարկելու, իսկ ծանուցումը 02.10.2018թ.-

ին nfo....էլ հացեին ուղարկելու խնդիր, որի հետևանքով Ընկերությունը զրկվել է Ընթացակարգի հետագա մասնակցությունից:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է հաշվի առնելով վերը նշված հանգամանքները և բավարարել Ընկերության բողոքը, քանի որ խախտվել են «Գնումների մասի» ՀՀ օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, արդյունքում Ընկերությունը հնարավորություն կունենա վերականգնել իր մասնակցության իրավունքը:

Ընկերությունը խնդրել է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ «Ինտերքլին» ՍՊԸ-ն իր գործունեությունը հիմնականում ծավալում է պետական գնումներին մասնակցելով և արդյունքում նաև պայմանագիր կնքելով ու ծառայություններ մատուցելով /արդյունքում վարձատրելով նաև աշխատակիցներին/ և այս տարիների ընթացքում Ընկերությունը դրսևորել է իրեն որպես պարտաճանաչ և հուսալի գործընկեր, իսկ այս մրցույթի բանակցություններին մասնակցելու դեպքում Ընկերությունը հնարավոր է առաջարկեր այնպիսի գին, որի արդյունքում հենց Ինտերքլին» ՍՊԸ-ն կարող էր ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ինտերքլին» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել «ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.09.2018թ. թիվ 3 արձանագրության 5-րդ կետով կայացրած որոշումը, որի համաձայն՝ «ԻՆՏԵՐՔԼԻՆ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով միաժամանակյա բանակցությունների վարման նիստի տեղի և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. Դադարեցնել «ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.09.2018թ. թիվ 3 արձանագրության 5-րդ կետով կայացրած որոշումից հետո գնահատող հանձնաժողովի կայացրած բոլոր որոշումները, այդ թվում նաև «Քլիներս» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

3. Պարտավորեցնել «ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ բոլոր մասնակիցներին միաժամանակյա բանակցությունների վարման նիստի տեղի և ժամի մասին կրկին ծանուցում ուղարկելու վերաբերյալ:

4. Պարտավորեցնել «ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ բոլոր մասնակիցների հետ կրկին միաժամանակյա բանակցություններ վարելու վերաբերյալ:

«Ինտերքլին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.11.2018թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ Ազգային ժողովի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ Ազգային ժողովը 09.11.2018թ. թիվ 1.1/4852-18 գրությամբ Ընկերության կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ Ազգային ժողովի սանիտարական մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով ընաթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ էին ներկայացրել թվով 7 մասնակիցներ:

Ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 19.09.2018թ., սակայն Ընթացակարգի գնահտող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետով, մասնակիցների հայտերի գնահատումն իրականացրել է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ 27.09.2018թ.:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, 27.09.2018թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետով, ղեկավարվելով Կարգի 40րդ կետի 5-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերություններով, որոշել է նիստը կասեցնել՝ Ընթացակարգի բոլոր մասնակիցներին առաջարկված գների նվազեցման նպատակով հրավիրել միաժամանակյա բանակցությունների:

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն ուղարկվում են տեղեկություններն էլկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում եմ թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները:

Մասնակիցներից «Ինտերքլին» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված հայտի թիվ 1 հավելվածում՝ բաց մրցույթին մասնակցելու դիմումում նշել էր, որ վերջինիս էլեկտրոնային փոտի հացեն է՝ nfo@cleanhouse.am:

Պատվիրատուն, հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետը, վերը նշված բանակցությունների վերաբերյալ ծանուցումն ուղարկել է բոլոր մասնակիցներին, ինչպես նաև «Ինտերքլին» ՍՊԸ-ին, վերջինիս կողմից ներկայացված հայտում առկա nfo@cleanhouse.am էլեկտրոնային փոստի հասցեին, բավականաչափ համոզված լինելով, որ պատշաճ ծանուցումը տեղի է ունեցել, քանի որ Ընթացակարգի բոլոր մասնակիցները ներկայացել էին վերը նշված բանակցություններին, բացառությամբ՝ «Ինտերքլին» ՍՊԸ-ի:

Պատվիրատուն նշել է, որ ինչ վերաբերում է բողոքաբերի այն դիրքորոշմանը, որ հրավիրված միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ չի ծանուցվել, ինչի արդյունքում էլ զրկվել է Ընթացակարգին այլևս մասնակցելու իրավունքից և վերջինիս այն հարցին, թե ստեղծված իրավիճակում առկա է արդոք «Ինտերքլին» ՍՊԸ-ի մեղավորությունը, ապա հայտնում ենք, որ Պատվիրատուի կողմից պատշաճ ծանուցումը տեղի է ունեցել, ինչի վերաբերյալ առկա է էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված լինելու փաստը հավաստող էլեկտրոնային էջի արտատպումը:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդմանը, որ armeps էլեկտրոնային համակարգից վերջինս ստացել է ուղերձ-նամակներ, ապա այս կապակությամբ հայտնում ենք, որ նշված համակարգից ոչ ավտոմատ ծանուցմամբ, որը իրականացվում է ընդամենը մասնակցի անվանումը նշելու միջոցով, ուղարկվել են արձանագրություններ, իսկ բանակցության հրավիրելու վերաբերյալ ծանուցումն ուղարկվել է «Ինտերքլին» ՍՊԸ-ի կողմից հայտով տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին»:

Ամփոփելով վերոգրյալը Պատվիրատուն հայտնել է, որ «Ինտերքլին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով 01.11.2018թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/92 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/92 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար շենքի սանիտարական մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Ինտերքլին» ՍՊԸ-ն:

2.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.09.2018թ նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնումն իրականացվում է Օրենքի 15–րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերություններով, որոշեց նիստը կասեցնել՝ Ընթացակարգի բոլոր մասնակիցներին առաջարկված գների նվազեցման նպատակով հրավիրել միաժամանակյա բանակցությունների 04.10.2018թ. ժամը 12:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում /ընդունարան/:

3. Նույն արձանագրության 5-րդ կետով արձանագրվել է, որ «Ինտերքլին» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով 2018 թվականի հոկտեմբերի 4-ին ժամը 12:00-ին հրավիրված միաժամանակյա բանակցությունների վարման նիստի տեղի և ժամի մասին, չէր ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. Նույն արձանագրության 6-րդ կետով կայացված որոշմամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Քլիներս» ՍՊԸ-ն, իսկ 2-րդ տեղ՝ «Բի էլ Գրուպ» ՍՊԸ-ն:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Ինտերքլին» ՍՊԸ-ի 29.10.2018թ. բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ Ազգային ժողովի 09.11.2018թ. թիվ 1.1/4852-18 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 32-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում:

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով համարումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: ***Հրավերով և հայտով նախատեսվում են*** պատվիրատուի և ***մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 4.3-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով*** հարկ վճարողի հաշվառման համարը և ***էլեկտրոնային փոստի հասցեն:***

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերությունների համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում ***գնահատող հանձնաժողովի քարտուղարը*** բավարար գնահատված ***բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին***:

Այսպես ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար շենքի սանիտարական մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Ինտերքլին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.09.2018թ նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ արձանագրել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնումն իրականացվում է Օրենքի 15–րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերություններով, որոշեց նիստը կասեցնել՝ Ընթացակարգի բոլոր մասնակիցներին առաջարկված գների նվազեցման նպատակով հրավիրել

միաժամանակյա բանակցությունների 04.10.2018թ. ժամը 12:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում /ընդունարան/:

Նույն արձանագրության 5-րդ կետով արձանագրվել է, որ «Ինտերքլին» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով 2018 թվականի հոկտեմբերի 4-ին ժամը 12:00-ին հրավիրված միաժամանակյա բանակցությունների վարման նիստի տեղի և ժամի մասին, չէր ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Նույն արձանագրության 6-րդ կետով կայացված որոշմամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Քլիներս» ՍՊԸ-ն, իսկ 2-րդ տեղ՝ «Բի էլ Գրուպ» ՍՊԸ-ն:

ԳԲԽ-ԱՄ-2018/92 բողոքով տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին են ներկայացրել Պատվիրատուի «alina.grigoryan@parliament.am» էլեկտրոնային հասցեի համապատասխան էջի արտատպումը, համաձայն որի վերոնշյալ էլեկտրոնային հասցեից 02.10.2018թ. ժամը 11:15-ին «Ինտերքլին» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված թիվ 1 հավելվածում՝ բաց մրցույթին մասնակցելու դիմումում նշված էլեկտրոնային փոստի հացեին /nfo@cleanhouse.am/ է ուղարկվել ծանուցում՝ առաջարկված գների նվազեցման նպատակով հրավիրված միաժամանակյա բանակցությունների վերաբերյալ, որը տեղի էր ունենալու 04.10.2018թ. ժամը 12:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում /ընդունարան/:

Այսպես, Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 4.3-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով*** հարկ վճարողի հաշվառման համարը և ***էլեկտրոնային փոստի հասցեն***:

«Ինտերքլին» ՍՊԸ-ն իր կողմից հայտով ներկայացված թիվ 1 հավելվածում՝ բաց մրցույթին մասնակցելու դիմումում, նշել է՝ «Ինտերքլին» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հացեն է՝ nfo@cleanhouse.am:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանվում է, որ ***գնահատող հանձնաժողովի քարտուղարը*** բավարար գնահատված ***բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների***

նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Այսպիսով, ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից ներկայացված ««alina.grigoryan@parliament.am» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, ինչպես նաև ԳԲԽ-ԱՄ-2018/92 բողոքով տեղի ունեցած նիստի ժամանակ նշված էլեկտրոնային փոստի «Ուղարկվածներ» բաժնի համապատասխան էլեկտրոնային նամակները, արձանագրում եմ, որ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/32» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ համապատասխան ծանուցումը՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, 02.10.2018թ. ժամը 11:15-ին ուղարկվել է «Ինտերքլին» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված թիվ 1 հավելվածում՝ բաց մրցույթին մասնակցելու դիմումում նշված էլեկտրոնային փոստի հացեին, այն է՝ nfo@cleanhouse.am:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ «Ինտերքլին» ՍՊԸ-ն 02.10.2018թ. Պատվիրատուի կողմից չի ստացել որևէ ծանուցում /նամակ/ 04.10.2018թ. տեղի ունենալիք բանակցությունների վերաբերյալ, այլ ստացել է միայն Պատվիրատուի կողմից 24.09.2018թ. ժամը 18:42-ին և 05.10.2018թ. ժամը 19:08-ին ուղարկված էլեկտրոնային ուղերձները, որը հաստատվում է նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կատարված փորձաքննության արդյունքում, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից 24.09.2018թ. ժամը 18:42-ին և 05.10.2018թ. ժամը 19:08-ին Ընկերությանն ուղարկված էլեկտրոնային ուղերձները՝ Ընթացակարգի արձանագրությունները, Ընկերությանն ուղարկվել են armeps համակարգից ոչ ավտոմատ ծանուցմամբ, իսկ 04.10.2018թ. տեղի ունենալիք բանակցությունների վերաբերյալ 02.10.2018թ. ժամը 11:15-ի ծանուցումն Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ ուղարկվել է «Ինտերքլին» ՍՊԸ-ի կողմից հայտով տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին, այն է՝ nfo@cleanhouse.am:

Այսպիսով վերոգրյալով պայմանավորված, արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից պահպանվել է Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությամբ

սահմանված պահանջը, ուստի գտնում եմ, որ «Ինտերքլին» ՍՊԸ-ի բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ինտերքլին» ՍՊԸ-ի կողմից 29.10.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ